ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գոռ Արտուրի Հովհաննիսյանի *«Քաղաքական ինքնության փոփոխության դինամիկան Թուրքիայում 1920-ական-2023 թթ.. իսլամի և ազգայնականության սինթեզը»* թեմայով՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ամերիկյան նեոպահպանողականության «կնքահայրերից» Իրվինգ Քրիսթոլի բնորոշմամբ՝ պահպանողականությունը հենվում է երեք հիմնասյուների վրա՝ կրոն, ազգայնականություն և տնտեսական աճ: Ընդ որում, նշվածներից առավել կարևոր է հենց կրոնը, քանի որ դրա ընկալումը մարդկանց ուղեկցում է վաղ մանկությունից[1]: Ասվածն առավել քան բնութագրական է թուրքական հասարակության համար, որի դեպքում ազգայնական-պահպանողականների *(«milliyetçi-muhafazakar»)* և սրբազան արժեքներ դավանողների *(«mukaddesatçı»)* միջև սահմանները խիստ պայմանական են: Կարելի է համաձայնել թուրք հետազոտող Թանըլ Բորայի այն պնդման հետ, որ ազգայնականությունը, պահպանողականությունը և իսլամականությունը թուրքական աջակողմյան գաղափարական մտքի՝ մեկմեկու փոխակերպվող երեք ագրեգատային վիճակներ են[2]:

Ատենախոսը՝ Գոռ Հովհաննիսյանը պատմագրության և քաղաքագիտության հատույթում, մեր գնահատմամբ, ամբողջական և համակողմանիորեն ներկայացրել է թուրքական պետության հանրապետական շրջափուլի ընթացքում իսլամի «քաղաքականացման» պատմամշակութային և քաղաքական նախադրյալները, իսլամի և ազգայնականության զուգակցման ընդհանուր օրինաչափությունները, պատկերել թուրքական հասարակական-քաղաքական հոլովույթում կրոնի և ազգայնականության համադրամիասնության արդի դրսևորումները: Քաղաքագիտական գործիքակազմի և պատմական համապատկերի ներկայացման զուգակցման միջոցով հեղինակին հաջողվել է հարցի ուսումնասիրմանը մոտենալ յուրօրինակ՝ հայկական գիտական միջավայրում առաջին անգամ հանդիպող դիտանկյունից, որն ամբողջովին տեղավորվում է աշխատանքի հիմքում դրված նպատակի և խնդիրների ծիրում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի նպատակը, խնդիրները, ժամանակագրական

---

[1] **Irving Kristol**, *Neoconservatism: The Autobiography of an Idea* (New York: Free Press, 1995), 365.

[2] Հմմտ. **Tanıl Bora**, *Türk Sağının Üç Hali: Milliyetçilik, Muhafazakarlık, İslamcılık* (İstanbul: İletişim Yayınları, 2017), 8-9:

սահմանները, արդիականությունը և գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը և օգտագործված գրականության և աղբյուրների տեսությունը:

Աշխատանքի առաջին գլխում քեմալական աշխարհիկացման փորձերի ընդհանուր նկարագիրը զուգահեռվում է 20-րդ դարի առաջին տասնամյակներում թուրքական հասարակական կյանքում կրոնի ազդեցության դեմ արշավի հետևանքով ծայր առած գաղափարական բանավեճի վերլուծության հետ՝ անդրադառնալով հանրապետական շրջանի քաղաքական կերպափոխումների համատեքստում իսլամի աստիճանական քաղաքականացման պատճառներին ու խթաններին:

Հետազոտության երկրորդ գլուխն ընդգրկում է 1960 թ. ռազմական հեղաշրջմանը հաջորդած շրջանում իսլամականության և ազգայնականության փոխհարաբերությունների ինստիտուցիոնալացման շրջանը՝ հատուկ շեշտադրում կատարելով Թուրքիայում իսլամական և ազգայնական քաղաքական շարժումների բարձրացման ու կայացման վրա: Մեր կարծիքով՝ առանձնահատուկ ուշադրության է արժանի գլխի չորրորդ ենթագլուխը, որում ներկայացվել է թուրք-իսլամական սինթեզի հայեցակարգային մոտեցման ձևավորման համակարգային պատկերը:

Աշխատանքի երրորդ գլուխն ուշագրավ ջանք է՝ վերհանելու մերօրյա թուրքական հասարակական-քաղաքական ընկալումներում իսլամի և ազգայնականության սինթեզի գործնական դրսևորումները, ինչպես նաև ներքաղաքական խոսույթում դրանց շրջանառման ընդհանուր օրինաչափությունները: Հատուկ հետաքրքրություն է առաջացնում գլխում բերված՝ աշխարհիկության վերաբերյալ ԹՀ գործող նախագահ Ռ.Թ. Էրդողանի պատկերացումների ամփոփոփ նկարագիրը:

Ուսումնասիրության վերջում ամփոփվում է աշխատանքը և բերվում են հիմնական եզրակացությունները:

Ներկայացվող ատենախոսության վերաբերյալ առկա են հետևյալ նկատառումներն ու առաջարկները.

▪Ամբողջ ատենախոսության և, մասնավորապես, երրորդ գլխի երրորդ ենթագլխում կարմիր թելի նման անցնում է թուրքական աջակողմյան գաղափարական մտքի վրա Ն.Ֆ. Քըսաքյուրեքի ազդեցության հիմնավոր թեզը: Ընդունելով, որ խնդրո առարկա աշխատանքի սահմանափակ ծավալում հնարավոր չէր անդրադառնալ թուրքական իսլամահեն գաղափարական մտքի ողջ ներկապնակին՝ այնուհանդերձ կարծում ենք, որ ուսումնասիրությունը կշահեր, եթե ամփոփ անդրադարձ կատարվեր նաև թուրք իսլամական գաղափարախոս Նուրէթին Թոփչուի հայացքներին: Առավել ևս՝ հաշվի առնելով, որ ԹՀ գործող նախագահի հանրային խոսքում պարբերաբար են հանդիպում նաև նրա մտքերի

մեջբերումները[3], իսկ Թոփչուի գաղափարներն իրենց անխախտ տեղն ունեն ԱԶԿ հռետորական զինանոցում[4]:

▪Չնայած ուսումնասիրության տեքստում բազմաթիվ դիպվածային անդրադարձներին (հատկապես՝ Նաքշբանդիա սուֆիական տարիկաթի օրինակով)՝ մեր կարծիքով Թուրքիայում իսլամի քաղաքականացման գործում սուֆիական եղբայրությունների առանցքային դերակատարությունը և հանրապետական շրջանի տարբեր ղեկավարների հետ վերջիններիս տարաբնույթը կապերը, դրանցում օսմանյան ավանդույթի շարունակականության հաշվառմամբ, անհրաժեշտ էր ներկայացնել առանձին մեկնաբանությամբ[5]:

▪Իբրև ազգայնականի և կրոնականի խաչաձևման ԱԶԿ-ական մոտեցումների կենսագործման սոցիալ-քաղաքական հարթակ՝ մեր կարծիքով առանձնահատուկ և քիչ ավելի մանրամասն հիշատակման են արժանի նաև ԹՀ Կրոնական գործերի վարչությունը (այսպես կոչված՝ «Դիյանեթ») և դրա գործունեության առանձնահատկությունները[6], որոնք Էրդողանի և կուսակիցների կողմից քարոզվող նոր ազգային *(«yeni milli»)* կամ տեղական և ազգային *(«yerli ve milli»)* մշակութային ինքնության կառուցարկման բնութագրական դրսևորումներից են[7]:

Վերոնշյալ նկատառումները, սակայն, ամենևին չեն ստվերում հետազոտության գիտական արժեքը և ունեն բացառապես խորհրդատվական բնույթ:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և ընդգրկում հետազոտության հիմնական արդյունքները: Ուսումնասիրության առանձին դրույթներն արտացոլված են հեղինակի յոթ հոդվածներում:

Աշխատության աղբյուրագիտական հենքը բավականաչափ հարուստ է. հեղինակի կողմից օգտագործվել է թեմայի վերաբերյալ առկա տարալեզու աղբյուրների գերակշիռ մասը: Ատենախոսությանը բնորոշ է սահուն, կուռ և տրամաբանական շարադրանքը: Օգտագործված եզրութաբանական ապարատը լիովին համապատասխանում է գիտական չափանիշներին: Ատենախոսի կողմից առաջ քաշված խնդիրներն արդիական են և մեթոդաբանորեն հղկված:

---

[3] Տե՛ս, օրինակ, *"Cumhurbaşkanı Erdoğan, Mersin'de Üniversiteyi Kazanan Gençlerle Buluştu," Habertürk*, Eylül 18, 2021, https://www.haberturk.com/son-dakika-cumhurbaskani-erdogan-genclere-sesleniyor-3195797 (մուտք՝ 30.11.2024 թ.):

[4] **Umut Uzer**, *An Intellectual History of Turkish Nationalism: Between Turkish Ethnicity and Islamic Identity* (Salt Lake City: University of Utah Press, 2016), 208.

[5] **Angel Rabasa and F. Stephen Larrabee,** *The Rise of Political Islam in Turkey* (Santa Monica: RAND Corporation, 2008), 13-15.

[6] Հմմտ. **Emir Kaya**, *Secularism and State Religion in Modern Turkey: Law, Policy-Making and the Diyanet* (London: I.B. Tauris, 2018), 58–63, 79–89.

[7] **Nil Mutluer**, *"Diyanet's Role in Building the 'Yeni (New) Milli' in the AKP Era,"* Religion as a Foreign Policy Tool 27 (2018), https://doi.org/10.4000/ejts.5953 (մուտք՝ 30.11.2024 թ.):

Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական նյութի հմուտ մշակմամբ, վերջնարդյունքում արված եզրահանգումներն ունեն գիտատեսական, որոշակիորեն նաև՝ արտաքին քաղաքական անվիճելի նշանակություն: Այս տեսակետից պետք է առանձնացնել հատկապես ատենախոսության երրորդ գլխի երկրորդ, երրորդ և չորրորդ ենթագլուխները:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է արձանագրել, որ Գոռ Հովհաննիսյանի *«Քաղաքական ինքնության փոփոխության դինամիկան Թուրքիայում 1920-ական-2023 թթ.. իսլամի և ազգայնականության սինթեզը»* աշխատանքը հաջողված գիտական ուսումնասիրություն է և բավարարում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ՝ իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԱԳՆ եվրասիական տարածաշրջանի վարչության
երկկողմ հարաբերությունների բաժնի վարիչի պ/կ,
պ.գ.թ. Ա.Ա. Գևորգյան
02.12.2024 թ.

Ա. Գևորգյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.
ՀՀ ԱԳՆ անձնակազմի կառավարման վարչության պետի պ/կ
Մ.Կ. Մարտիկյան